

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28.11.2015

Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

Օրակարգ

1. Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկում /Ձեկուցող՝ Վ. Ալեքսանյան/
2. 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների վիճակը /Ձեկուցող՝ Վ. Ալեքսանյան/:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ՝

օրակարգի առաջին հարցի վերաբերյալ խոսելով՝ զեկուցող Վ. Ալեքսանյանը հանգամանալի ներկայացրեց ֆակուլտետում սթ. հոկտեմբեր ամսին իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները: Նա առաջին հերթին կարևորեց պարբերաբար իրականացվող սոցհարցումը՝ որակելով այն որպես կրթության որակի և արդյունավետության բարձրացման անհրաժեշտ գործիք: Ուսանողին մատուցվում է բավականին տարողունակ հարցաշար, որը նպատակ է հետապնդում բացահայտելու ուսումնական գործընթացում տեղ գտած թերությունները, բացթողումները: Միաժամանակ նպատակ ունի շեշտադրելու և խթանելու դրականն ու առաջադիմականը: Ձեկուցողը ներկայացրեց դեկանի և դեկանատի ստացած միավորները, դրանք համապատասխանաբար 4,79 և 4,83 են: Ֆակուլտետի միջին գնահատականը կազմում է 4,49 միավոր: Նա նշեց, որ յուրաքանչյուր բուհի ամենակարևոր կառուցվածքային միավորը ֆակուլտետն է: Ֆակուլտետի ճիշտ կառավարմամբ, ուսումնագիտական բոլոր օղակների ներդաշնակ գործունեությամբ միայն կարելի է արձանագրել առաջընթաց և

զարգացում: Ընդգծվեց, որ ֆակուլտետի կառավարմանը՝ ուսանողների կողմից տրված գնահատականը բավականին բարձր է և պարտավորեցնող:

Զեկուցողն անդրադարձավ առանձին ամբիոններում ընդգրկված դասախոսների ստացած գնահատականներին: Նկատելի է, որ դասախոսների ճնշող մեծամասնությունը գնահատվել է ավելի քան չորս միավոր: Նախորդ կիսամյակում անցկացված հարցումներից հետո մի շարք դասախոսներ, ովքեր ստացել էին ցածր միավորներ հետևություններ են կատարել: Շտկել են այն թերություններն ու սխալները, որոնք մատնանշվել էին ուսանողների կողմից: Արդյունքների հրապարակային քննարկումը հնարավորություն կտա ինքնակատարելագործման գործընթացը դարձնել անընդհատ և շարունակական: Անշուշտ, այս գործընթացում կա նաև սուբյեկտիվ գործոն /ուսանողը ցածր է գնահատում քննությունների ընթացքում իրեն ցածր գնահատած դասախոսին/, սակայն, անկախ դրանից, դասախոսները պարտավոր են հաշվի նստել ուսանողի կարծիքի հետ և մշտապես աշխատել մասնագիտական և գիտական որակների բարձրացման ուղղությամբ: Ըստ ամբիոնների արդյունքները հետևյալն են. Հայոց լեզվի և գրականության ամբիոն՝ 4,52 միավոր, Մանկավարժության և հոգեբանության ամբիոն՝ 4,70 միավոր, Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն՝ 4,41 միավոր, Օտար լեզուների ամբիոն՝ 4,42 միավոր: Համեմատություն կատարելով նախորդ կիսամյակում /2014-2015 ուստարվա առաջին կիսամյակ/ կազմակերպված հարցումների թվային արդյունքների հետ՝ ակնհայտ երևում է, որ ֆակուլտետի ցուցանիշերը աճել են, ինչը ուրախալի է: Սակայն դա չի նշանակում, որ կարելի է բավարարվել ստացած միավորներով և հանգստանալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, կ.գ.թ. Ս. Խաչատրյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, ուսանողներ Վ. Վանեսյանը, Դ. Քոբոբեյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- 2015թ. Հոկտեմբեր ամսին ֆակուլտետում իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները համարել բավարար և շարունակել աշխատանքները կրթության որակի բարձրացման ուղղությամբ:

ԼՍԵՑԻՆ՝

անցնելով օրակարգի երկրորդ հարցին՝ զեկուցող Վ. Ալեքսանյանը ներկայացրեց 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը: Ներկայում այն քննարկվում է ուսանողների հետ: Զեկուցողը փաստեց, որ երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին: Այժմ ստուգվում է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը: Ստուգվում է ծրագրերի կատարողականը և դրան համապատասխան մատենավարության վիճակը: Նկատվում է, որ որոշ դասախոսների մոտ կան մատենավարական թերացումներ: Այդ բացերը քննարկման և շտկման փուլում են: Վ. Ալեքսանյանը խոսեց նաև ֆակուլտետում իրականացված դասալսումների մասին: Դասալսումներ պարբերաբար կատարվում են երիտասարդ դասախոսների մոտ: Արդյունքները քննարկվում են, կատարվում են եզրակացություններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ներսիսյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, կ.գ.թ. Ս. Խաչատրյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, ուսանողներ Վ. Վանեսյանը, Դ. Քոքոբեյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Վ. Ալեքսանյան

Ա. Ղևոնդյան